

«ԱՎՇԱՐԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎՇԱՐԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«Ավշարի գինու գործարան» ՍՊԸ

տնօրեն՝

Ս. Միրզոյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ընդհանուր տեղեկություններ.....	3
2.	Շրջակա միջավայրի հիմնական առանձնահատկությունները.....	4
	2.1. Ֆիզիկա-աշխարհագրական պայմանները.....	4
	2.1.1. Ռելիեֆ, լանդշաֆտ.....	4
	2.1.2. Ջրային ռեսուրսներ	7
	2.1.3. Հիդրոերկրաբանական պայմաններ.....	8
	2.2. Կլիմա.....	10
	2.3. Հողային ռեսուրսներ.....	11
	2.4. Բուսական և կենդանական աշխարհ.....	16
3.	Սոցիալ-տնտեսական վիճակի բնութագիրը.....	22
4.	Նախագծի համառոտ նկարագիրը.....	26
	4.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները.....	26
	4.2. Գործարանի ջրամատակարարման և ջրահեռացման բնութագիրը.....	31
	4.2.1. Ջրամատակարարման համակարգեր.....	31
	4.2.2. Ջրահեռացման ցանցեր և կառույցներ.....	31
	4.2.3. Ջրապահանջը հրդեհաշիջման կարիքների համար.....	31
5.	Առաջացող թափոնների բնութագիրը.....	33
6.	Բնապահապանական միջոցառումներ.....	34
7.	Հակավթարային միջոցառումներ.....	34
8.	Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա.....	36
	8.1. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումները.....	36
9.	Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա.....	36
	9.1. Խորքային ջրի օգտագործումը.....	36
10.	Բնապահապանական կառավարման պլան և մոնիթորինգի ծրագիր.....	36
	Գրականության ցանկ.....	38
	Հավելված.....	41

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

՝<<Ավշարի գինու գործարան>> ՍՊԸ-ն նախատեսվում է վերագինել Ավշարի գինու գործարանը՝ տեղադրելով մեկ շշալցման հոսքագիծ: Շինարարական ոչ մի աշխատանքներ նախատեսված չեն:

Իտալական արտադրության RT/24 մոդելի AVE վակուումային շշալցման մոնոբլոկով նոր հոսքագիծը նախատեսվում է տեղակայել թիվ 2 շշալցման արտադրամասում:

Հոսքագծի ժամային արտադրողականությունը կազմում է 6000 շիշ: Առավելագույն հզորությունը կկազմի 6000լ/ժամում:

Նախատեսված է 0,2լ-ից-մինչև 1,0լ տարողության ապակյա շշերով ոգելից խմիչքների արտադրության համար:

Գործարանը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Արարատ համայնքի վարչական տարածքում, կազմակերպությանը պատկանող սեփական տարածքում: Գործարանը իր ողջ ենթակառուցվածքներով կառուցված և շահագործվում է դեռևս 1995թ-ից, այն հազեցած է ժամանակակից բոլոր սարքավորումներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՖԻԶԻԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1.1. Ռելիեֆ, լանդշաֆտ

Արարատի մարզի հարավ-արևմտյան եզրին գուգահեռ 6-13կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավ-արևելյան մասը:

Հյուսիսում Երանոսի լեռնաշղթան է: Հյուսիսային սահմանն անցնում է Ագատ և դրա վտակ Գողթ գետերով:

Հյուսիս-արևելքում Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան հատվածն է: Արևելքում Մժկատարի լեռներն են, որից արևմուտք ընկած է Դահնակի լեռնաշղթան, սրանից էլ հարավ գտնվում է Ուրծի լեռնաշղթան: Մարզի կենտրոնում Երասխի լեռներն են, Կոտուց, Խոսրովասար լեռնագագաթները և այլ լեռնագանգվածներ:

Տարածքի ամենացածր կետը հարավում է՝ Արաքսի հունի մոտ՝ 801մ: Ամենաբարձր կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555.7մ:


Տարածքի միայն մոտ 30%-ն է հարթավայրային:

Մարզի խոշոր գետերն են Արաքսը, Հրազդանը, Ագատը, Վեդին: Համեմատաբար փոքր գետերից են Արածոն, Չորասուխեղեղատարը, Ագատի ու Վեդիի վտակները՝ Քաջառուն (Դարբանդ), Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն: Ագատի վրա Լանջազատ գյուղի մոտ կառուցված է Զովաշենի ջրամբարը և համանուն ՀԷԿ-ը:

Արարատի մարզում տարածված են ՀՀ-ում առկա բոլոր 8 լանդշաֆտային գոտիները: Ցածրադիր շրջաններից մինչև բարձրադիր շրջաններ դրանք հաջորդում են իրար այս հերթականությամբ. անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան, ալպյան, ձյունամերձ: Բայց սրանցից հիմնականներն են կիսաանապատային (Արարատյան հարթավայրում), չոր տափաստանային (միջին բարձրության լեռներում), ալպյան (Գեղամա լեռնաշղթայի լանջերին):

Ստորև ներկայացվում է գոյություն ունեցող գործարանի տարածքի ռելիեֆի ձևագրական տիպերի և մակերևույթի գերակշռող թեքությունների սխեմատիկ քարտեզները՝

ՌԵԼԻԵՖԻ ՁԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՁԵՎԵՐ



ՏԻՊԵՐ

Միջինլեռնային գոտի (1 500-2 800 մ)

- Ջառիքափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
- Անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
- Հափավոր զառիքափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով
- Ուռուցիկ լանջերով գմբեքաձև լեռնազանգվածներ՝ մասնատված հովտաձորակային ցանցով
- Մնացուկային բարձունքներ՝ ձորակներով թույլ մասնատված

Ցածրլեռնային գոտի (մինչև 1 500 մ)

- Մեղմաթեք, մասամբ ժայռոտ լանջերով, մասնատված V-աձև, երբեմն արկղաձև հովիտներով
- Խիստ մասնատված, հաճախ անհամաչափ լանջերով (կուեստներ) լեռկուտներ (Bad lands)

Վահանաչև բարձրադիր լեռներ (2 800 մ և բարձր)

- Թույլ մասնատված, մեղմաթեք աստիճանակերպ լանջեր
- Աստիճանակերպ լանջեր, մասնատված U-աձև հովիտներով
- Մեղմաթեք, բլրավետ լանջեր, մասնատված V-աձև հովիտներով

Սարահարթեր և սարավանդներ

- Մերձգագաթային, հորիզոնականին մոտ, թույլ թեք մասամբ բլրավետ
- Ալիքավոր-բլրավետ, թույլ մասնատված

Լեռնային հարթություններ

Միջին բարձրություն (1 500-2 500 մ)

- ա) հորիզոնականին մոտ
բ) թեք, մասամբ աստիճանակերպ, չափավոր մասնատված (մինչև 2 500 մ)
- Հորիզոնականին մոտ, մասամբ դարավանդավորված, թույլ ալիքավոր (1 500-2 500 մ)

- Նախալեռնային շլեյֆ՝
ա) 2 100-2 300 մ, բ) մինչև 1 500 մ
- Թեք, դարավանդավորված (1 200-2 100 մ)

Ցածրադիր (մինչև 1 500 մ)

- Թեք, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500 մ)
- Նախալեռնային, հորիզոնականին մոտ (250-800 մ)
- Ալիքավոր, դարավանդավորված
- Գարավանդավորված, մասամբ մասնատված ձորակներով




Գետահովիտներ

ՁԵՎԵՐ




Կանիոններ
և կիրճեր

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԳԵՐԱԿՇՈՒՂ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



2.1.2. Ջրային ռեսուրսներ

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքսի ավազանին: Նրա տարածքով են անցնում Հրազդան գետն իր ստորին հոսանքով, իսկ Ազատ, Վեդի և Արածո գետը՝ ամբողջ ընթացքով՝ ակունքից գետաբերան: Մի քանի տասնյակ գետակներ էլ ամռանը բոլորովին ցամաքում են:

Գետերից միայն Արածո գետն է, որ իր ստորին հոսանքում անցնում է ՀՀ-ից դուրս: Մնացած գետերի ջրերն ամռանը լիարժեք օգտագործվում են ոռոգման կարիքների համար: Մնումը ձնհալքային, անձրևաջրային, վարարում են ապրիլ-մայիս ամիսներին: Ոռոգման նպատակով Ազատ գետի վրա կառուցվել է համանուն ջրամբարը, Արածո գետի վրա՝ Զանգակատան ջրամբարն է Հորթուն բնակատեղիի մոտ:

Մարզում կառուցվել է Կախանովի և Արտաշատի ջրանցքները 19-20-րդ դարերում:

Կախանովի ջրանցքը կառուցվել է 1870-1874 թվականներին Անդրկովկասյան փոստային օկրուգի պետ գեներալ Ն.Ն.Կախանովի նախաձեռնությամբ դեռևս հնագույն ժամանակներից գոյություն ունեցող ջրանցքի ընթացքով: 1870 թվականին Կախանովը Արազդայանի (Երասխավան) կիսաանապատները 65 տարով վարձակալեց՝ նպատակ ունենալով այնտեղ զբաղվել շաքարի ճակնդեղի մշակությամբ: 1874 թվականի նոյեմբերի 5-ին շինարարությունն ավարտվեց: Ջրանցքն ունի 36 կմ երկարություն: Այն վերակառուցվել է 1930 թվականին:

Արտաշատի ջրանցքը կառուցվել է 1930 թվականին: Սկիզբ է առնում Հրազդան գետի ձախ ափից՝ Երևանի տարածքում, ունի 61 կմ երկարություն: Վեդի գետն ու իր Քարաղբյուր, Շաղափ վտակներն ունեն տեղական ոռոգիչ նշանակություն:

Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ազատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագափի խոշոր ջրհան կայանները:

Բարձրադիր շրջանի ջրերը, հոսելով դեպի Արաքս գետի հովիտը, մուտք են գործում մուգ-կապտագույն լճային կավերի տակ և սնում արտեզյան ավազանները, իսկ մասամբ էլ, հոսելով բերվածքների մակերևույթով, առաջացնում են մեկուսացված

ջրային ավազաններ և վերնաջրեր:

Շրջանը հարուստ է նաև հանքային աղբյուրներով, որոնք գտնվում են գործարանի սահմաններից դուրս, դեպի արևելք, Ուրցի լեռնաշղթայի հարավային լանջերում: Այդ ջրերը նման են Ծղալտուբոյի հայտնի ջրերին և նրանց արդյունաբերական ելքը կազմում է 473.0լ/վրկ:

Շրջանի գետային ցանցը շատ թույլ է զարգացած: Շրջանի հիմնական գետային երակը համարվում է Արաքս գետը իր վտակ Վեդի գետով: Վեդի գետն իր ստորին հոսանքում ունի լայն գետահովիտ: Նրա ելքը նորմալ պայմաններում կազմում է 1-1.5լ/վրկ: Գետի ջրերը ամբողջովին բաժանվում են ոռոգման նպատակներով:

2.1.3. Հիդրոերկրաբանական պայմանները

Շրջանի հիդրոերկրաբանական պայմանները կանխորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Ստորգետնյա ջրերի սնման հիմնական աղբյուրներ են հանդիսանում մթնոլորտային տեղումները (82.8%), մակերևութային հոսքի ներծծումը (11.1%), աերացիայի գոտում ջրի գոլորշու կոնդենսացումը (4.8%) և ստորգետնյա ջրաներից հարակից շրջաններից (1.3%):

Չորրորդային հասակի փխրուն կամ թույլ ցեմենտացված ալյուվիալ, դելյուվիալ, պրոլյուվիալ, էլյուվիալ, սառցադաշտային և լճային նստվածքները՝ մինչև 40 մ և ավելին, ջրի մակարդակը՝ 0.1-25 մ-ի սահմաններում, ֆիլտրացիոն ունակությունը խիստ տարբերվում է:

Սարահարթը, որի վրա գտնվում է այն, արևմուտքից, արևելքից և հարավից ռելիեֆային պայմաններով պաշտպանված է հոսող ջրերից, իսկ կազմող ապարները գործնականում անջրաթափանց են: Բացի այդ ապարների անկումը հյուսիսում խանգարում են գրունտային ջրերի ներթափանցմանը տվյալ սահմանները:

Պետք է նշել, որ Արարատյան հարթավայրի այս մասում գրունտային ջրերի մակարդակը շատ ցածր է: Բոլոր հորատանցքերը, որոնք հորատվել են մինչև 861-880մ նիշերը, այսինքն ժամանակակից մակարդակից ավելի քան 45-91մ ցածր, անջուր են:

2.2. ԿԼԻՄԱ

Պայմանավորված Հայկական լեռնաշխարհի լեռնային մակերևույթով՝ այս ամբողջ տարածաշրջանում՝ այդ թվում Արարատի մարզում, կլիման ենթակա է վերընթաց գոտիականության:

Մասնավորապես այս մարզում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը, որոնք հարթավայրային շրջաններից մինչև լեռնային շրջաններ իրար հաջորդում են հետևյալ հաջորդականությամբ.

- չոր խիստ ցամաքային
- չոր ցամաքային
- չափավոր ցամաքային
- բարեխառն
- ցուրտ լեռնային
- ձյունամերձ

Արարատի մարզում տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր և բարձր լեռնային շրջանների միջև տատանվում է $+10^{\circ}\text{C}$ -ի և -2°C -ի միջև:

Ձմռանն անհողմ եղանակի պայմաններում տեղի է ունենում ջերմաստիճանային շրջադասություն. սառն ու ծանր օդը կուտակվում է Արարատյան դաշտում: Այդ պատճառով միջին գոտում՝ մինչև 2000 մետր բարձրությունները, ձմեռը լինում է ավելի տաք և արևոտ, քան Արարատյան գոգավորությունում:

Գարունն անցողիկ է և կարճատև: Մայիսի երկրորդ տասնօրյակից օդի ջերմաստիճանն անցնում է 15°C -ից, սկսվում է չոր, հաճախ խորշակներով երկարատև ամառը, որը շարունակվում է մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը:

Աշունը մեղմ է, անհողմ, հաճախ են թույլ անձրևները:

Քամիների հիմնական ուղղություններն են հյուսիս, հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք: Քամիների միջին տարեկան արագությունը կազմում է 2.3մ/վրկ, քամու առավելագույն արագությունը ապրիլ ամսին 3.2մ/վրկ է: Անհողմությունները կազմում

են 29%:

Մարզի հարթավայրային շրջանների համար բնորոշ են լեռնահովտային քամիները: Ամռանը՝ կեսօրից հետո, քամին Գեղամա լեռներից փչում է հովիտներ՝ մեղմացնելով ամառվա տապը:

Հունվարյան միջին ջերմաստիճանն է այդ շրջաններում համապատասխանաբար -6°C և -12°C , հուլիսյան ջերմաստիճանը՝ $+26^{\circ}\text{C}$ և $+8^{\circ}\text{C}$, միջին տարեկան տեղումները՝ 200մմ և 1000մմ: Ցածրադիր շրջաններում դիտված բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճաններն են -33°C և $+42^{\circ}\text{C}$, ընդ որում վերջինս Հայկական լեռնաշխարհում դիտարկված բացարձակ առավելագույն ջերմաստիճանն է և այն գրանցվել է Արարատյան հարթավայրի հարավ-արևելքում:

Ընդհանուր առմամբ Արարատի մարզն աչքի է ընկնում կլիմայի չորությամբ:

Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. $^{\circ}\text{C}$												Միջին տար. $^{\circ}\text{C}$	Բաց. նվազ. $^{\circ}\text{C}$	Բաց. առավ. $^{\circ}\text{C}$
			I	II	V		I	II	III	X		I	II			
1	2								0	1	2	3	4	5	6	7
Արարատ	818	-3.3	-0.3	6.5	13.3	18.0	22.4	26.2	25.8	20.9	13.7	6.2	-0.2	12.4	-32	42

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին	
		I	II	V		I	II	III	X		I	II		Ամեն. ցուրտ ամսվա %	Ամենա շոգ ամսվա, %
Արարատ	78	71	61	56	55	49	45	45	49	61	72	79	60	66	29

Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ

շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Գործարանի հարակից տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին են դասվում Ավշար համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

2.3. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողը բնական գոյացություն է, կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով: Հողառաջացնող գործաններն են աշխարհագրական, գեոմորֆոլոգիական, կլիմայական պայմանները, լանդշաֆտը, բուսական և կենդանական աշխարհի և մարդու ներգործությունը:

Հանքավայրի տարածքը ներկայացված է լեռնաշագանակագույն հողերով, իսկ Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում ձևավորվել են մարգագետնային գորշ ոռոգելի, կիսաանապատային գորշ հողեր: Այն հատվածներում,

որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են հիդրոմորֆ սոդային աղուտ-ալկալի հողեր:

Շագանակագույն հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, դրանց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17%՝ միջին քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմնահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ հասնում է 65-70սմ-ի:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10- 25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալային մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով:

Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացման պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում:


Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է

3-3.5%:Դրանց քիմիական հատկությունները հետևյալն են.

Հողի տիպը և ենթատիպը	Խորություն նր, սմ	Հումուս , %	CO ₂ , %	Կլանված հումքերի գումարը, մ.էկվ. 100գ հողում	P ^H -ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Մարգագետնային գորշ հողեր	0-21	1.8	6.0	26.8	8.4
	21-43	1.6	6.3	28.0	8.4
	43-65	0.9	7.9	31.9	9.0
	65-92	0.8	6.8	22.0	9.4
	92-182	0.9	6.8	36.8	9.5

Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային:

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

- | | |
|----|--|
| 41 | Բաց շագանակագույն մնացորդային կարբոնատային ին |
| 47 | Կիսաանապատային գորշ տիպիկ մնացորդային կարբոնատային |
| 49 | Կիսաանապատային գորշ տիպիկ բերվածքային |
| 53 | Ոռոգելի մնացորդային մարգագետնային գորշ խորը պրոֆիլային |
| 58 | Աղուտ-ալկալի մարգագետնային սողա-սուլֆատաբլորիդային |

Գոյություն ունեցող գործարանի տարածքում տարածված են կիսաանապատային գորշ հողեր:

Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրատեսակների վրա : Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ : Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35% :

Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր :

Ստորև աղյուսակում ներկայացված են գորշ հողերի քիմիական հատկությունները :

Խորությունը, սմ	Հումուս, %	Ընդհանուր, %	CO_2 , %	CaSO_4 , %	Կլանված հումքերի գումարը, Մ.էկվ. 100գ հողում	P^{H} -ը ջրային քաշվածքում
0-8	2.10	0.19	1.3	0.05	22.0	8.0
8-21	1.81	0.132	4.7	0.08	30.5	8.3
21-32	1.55	0.115	10.6	0.5	23.6	8.2
32-65	0.87	0.088	15.6	0.8	18.3	8.1
65-140	0.22	չի որոշված	2.2	42.1	չի որոշված	7.3

2.4. ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Գործարանի հարակից տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակներից կարող են հանդիպել երկկենցաղներից՝ Փոփոխական դոդոշը (*Bufo variabilis*), որը նախկինում հայտնի էր Կանաչ դոդոշ անունով: Այս տարածքում հանդիպող հավանական տեսակներից է նաև՝

- Փոքրասիական ճագարամուկը *Allactaga williamsi* Thomas, 1897,
- Անդրկովկասյան կուրամկնիկ *Ellobius lutescens* Thomas, 1897,

Պարսկական ավազամուկ *Meriones persicus* (Blanford, 1875)

Հարակից տարածքում դիտարկվել են հետևյալ կենդանիները և/կամ դրանց կենսագործունեության հետքերը՝

- Սողուններ՝

Eremias strauchi Kessler, 1878- Շտրաուխի մողեսիկ

- Թռչուններ

Monticola solitarius (Linnaeus, 1758) - Կապույտ

քարակեռնեխ *Oenanthe hispanica* (Linnaeus, 1758) -

Սևախայտ քարաթռչնակ *Passer domesticus* - Տնային

ճնճղուկ

- Կաթնասուններ

Lepus europaeus Pallas, 1778 - Գորշ

նապաստակ *Microtus majori* -

Թփուտային դաշտամուկ *Vulpes vulpes* -

Սովորական աղվես

Տարածքը իրենից ներկայացնում է կիսաանապատային չոր բուսականությամբ պատված տարածք, որտեղ հողի մակերեսի մեծ մասը զբաղեցնում են ապարների մերկացումները:

Բուսականության հիմնական ֆոնը օշինդրային և հազարատերևուկային կիսաանապատային համակեցությունն է՝ Օշինդր բուրավետ (*Artemisia fragrans*) և

Հագարատերևոկ նեղատերև (*Achillea tenuifolia*) տեսակների գերակշռությամբ:

Բուսաաշխարհագրական առումով հետազոտվող տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանի սահմանում: Բացի ֆոնային տեսակներից, բնական կիսաանապատային բուսականությունը հարուստ է բարդածաղկավորների այլ տեսակներով՝ *Helichrysum armenium* - Անթառամ հայկական, *Xeranthemum squarrosum* - Անմեռուկ չոված, *Chondrilla juncea*-Խիժաճարճատուկ կնյունանման և այլն), հացազգիների ընտանիքին պատկանող տեսակների մեծ քանակով (*Aegilops cylindrica* - Այծակն գլանաձև, *Bromus japonica*– Ցորնուկ ճապոնական, *Taeniatherum crinitum* - Երիզաքիստ երկարամագ, *Poa bulbosa*-Դաշտավլուկ սոխուկավոր), Խաչածաղկավորներին պատկանող *Lepidium vesicarium* - Կոտեմ բշտիկավոր տեսակով և այլն: Ներկայումս այստեղ առկա են դեգրադացված էկոհամակարգեր՝ հողի շուրջ 40-50% ծածկույթով: Թփերից գերակշռում է Դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasiana*) տեսակը:

Գործարանի տարածքից մոտավորապես 9.0կմ դեպի հարավ-արևելք տեղակայված է Գոռավանի ավազուտներ պետական արգելավայրը: Այս տարածքը հայտնի է բույսերի և կենդանիների տեսակային կազմի յուրահատկությամբ:

Գրականությունից հայտնի այդ տարածքում հանդիպող կենդանատեսակներից են ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները՝

1. Դալի ավազամուկը (*Meriones dahli* Shidlovski, 1962),
2. լայնականջ ոզնի (*Hemiechinus auritus* (Gmelin, 1770)),
3. անապատային խածկտիկ (*Bucanetes githagineus* (Lichtenstein, 1823)),
4. մոնղոլական խածկտիկ (*Bucanetes mongolicus* (Swinhoe, 1870)),
5. միջերկրածովային կրիա (*Testudo graeca* Linnaeus, 1758),
6. անդրկովկասյան մողեսիկ (*Eremias pleskei* Nikolsky, 1905),
7. Հորվաթի կլորագլուխ մողես (*Phrynocephalus persicus* De Filippi, 1863),
8. երկարատու սցինկ (*Eumeces schneideri* (Daudin, 1802)):

Դիտարկվող և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակները բացակայում են:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Խոսքովի արգելոցը կազմավորվել է 1958թ. Հարավային Հայաստանի բնական համալիրների պահպանման համար: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղի Գառնիի և Վեդի գետերի ավազանում: Մակերեսը 29126հա է, որից անտառայինը՝ 9446հա: Ռելիեֆը լեռնային է (բարձրությունը ծովի մակերևույթից 1600-3400 մ է) կտրտված է բազմաթիվ կիրճերով: Արգելոցի սահմաններում հանդիպում է բույսերի 1849 տեսակ (Հայաստանի բուսականության տեսակային կազմի 60%-ը, որոնցից 146-ը գրանցված են «Կարմիր գրքում»: Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ (24), օրինակ՝ հայկական ալոճենին, Վավիլովյան աշորան (տաբեկան) և այլն: Արգելոցում հանդիպող ողնաշարավոր կենդանիների 283 տեսակից (որը հայաստանի կենդանական տեսակային կազմի 46%-ն է) 50-ը գրանցված են «կարմիր գրքում»: Թռչնաֆաունան մոտ 130 տեսակ է. դրանց թվում են՝ քարակազավը, [սև անգղը](#), [գառնանգղը](#), կարմրաթև մագլցողը և այլն: Կաթնասուններից կա 55 տեսակ, սողուններից՝ 30, երկկենցաղների 4 և ձկների 9 տեսակ:



«Խոսրովի անտառ» պետական արգելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-338թթ-ին:

Խոսրովի արգելոցի տարացքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ: Գործարանը տարածքից գտնվում է շուրջ 15կմ հեռավորության վրա:

«Գոռավանի ավազուտներ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, զբաղեցնում է Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթությունները, Գոռավան գյուղի մոտ, Վեդի գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները, ծովի մակերևույթից 1100-1200 մետր բարձրության վրա: Գտնվում է գործարանից շուրջ 9.0կմ դեպի հարավ-արևելք:

«Խորվիրապ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Արարատի հարթավայրում. Խոր վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, Արտաշատ հնագույն քաղաքի մոտ, ծովի մակերևույթից 815.8-887 մետր բարձրության վրա: Գործարանից հեռավորությունը կազմում է 12-15կմ:

«Գիլան» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Գեղամա լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակերևույթից 1330-1400 մետր բարձրության վրա, գործարանից շուրջ 20կմ հեռավորության վրա:

Գործարանի վերազինումը բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցություն ունենալ չի կարող:

Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակութային միջավայր.



Խոր Վիրապ վանական համալիր

Արարատի մարզի պատմամշակութային հուշարձաններից են Լուսառատ գյուղից 1,6 կմ հյուսիս-արևմուտք գտնվող բլուրների վրա տեղադրված Խոր Վիրապ վանական համալիրը և Արտաշատ հնավայրը, Դվին հնավայրը՝ Հնաբերդ և Վերին Արտաշատ գյուղերի միջև ընկած բլրի վրա, Տափի բերդը՝ ամրոցը եկեղեցիով (որը կոչվում է Գևորգ Մարգարետունու անունով)՝ Ուրցաձոր գյուղից 6-6,8 կմ հյուսիս-արևելք, Հավուց Թառ վանական համալիրը՝ Գառնիգյուղից 2,8-3,4 կմ արևելք, XII դարի Սուրբ Կարապետ վանքը՝ Լանջառ գյուղից 5,7-6,3կմ հյուսիս-արևմուտք, Կաթավաբերդը (Գեղիի կամ Քեղիի բերդ)՝ Գառնի գյուղից 12,3-13 կմ հարավ-արևելք, Աղջոց վանքը՝ Գառնի գյուղից 6,1-6,5 կմ հարավ-արևելք:

Ուշագրավ է Խոր Վիրապ պատմաճարտարապետական հուշարձանը, որը գտնվում է Արարատի մարզի Փոքր Վեղի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա: Այստեղ է գտնվում հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորիչի հետ:

Խոր Վիրապ պատմաճարտարապետական՝ XIII դ. վանք-ամրոց համալիրը, եղել է հայոց ուխտատեղիներից մեկը և հանդիսացել է դպրության կենտրոն: Ունեցել է վարպետատուն, ուսուցչապետեր են եղել Վարդան Այգեկցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին: Հնում այստեղ է գտնվել պատմական Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը:

Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2008թ-ի թիվ 967-Ն որոշման, Արարատի մարզում գրանցված են բնության հետևյալ հուշարձանները.

1.	«Յախշիան» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Խոր հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա

5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ

9.	«Ջերմանիսի» ֆլորա	բրածո	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա		Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ

Կենսաբանական հուշարձաններ

1.	«Աղակալած ճահճուտ»		Արարատի մարզ, քաղաք Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա
----	--------------------	--	--

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1. ՀՀ Արարատի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը

Ավշարի գինու գործարանը գտնվում է Արարատի մարզի Արարատ համայնքի վարչական տարածքում:



Արարատի մարզը կազմավորվել է 1995թ. դեկտեմբերի 4-ին:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի տարածքը -

2096 քառ. կմ² յուրաքանչյուր տնտեսական հողատարածքը -

156760 հա

այդ թվում՝ վարելահողեր	–	2690053 հա
Մարզկենտրոնը	–	
	Արտաշատ քաղաք	
Քաղաքային համայնքներ	–	4
Գյուղական համայնքներ	–	93
Բնակչությունը	–	277.600
հազ. մարդ(մշտական, 2009թ. հունվարի 1-ի դրությամբ)		
այդ թվում՝		
քաղաքային	–	81.700 հազ. մարդ (29.4 %)
գյուղական	–	195.900 հազ. մարդ (70.6 %)

Ըստ ՀՀ Արարատի մարզի 2020 թվականի հողային հաշվեկշռի տվյալների՝ մարզի վարչական տարածքի մակերեսը 209,003.2հա է (2,090քառ. կմ), այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության՝ 156,470.0 հա, որից վարելահող՝ 24,604.4 հա:

Գյուղական բնակչությունը՝ 210.3 հազ. մարդ՝ ամբողջ բնակչության 70.6%, քաղաքայինը՝ 80.6 հազ. մարդ, 29.4%: Բնակչության խտությունը՝ 141 մարդ՝ 1 քկմ-ի վրա: Տնտեսությունների թիվը՝ 58228:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան - Երասխ

–Լեռնային Ղարաբաղ ավտոմայրուղին, և Երևան - Երասխ երկաթուղին:

Մարզում գործում է 112 հանրակրթական դպրոց, 6 քոլեջ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ «Արտաշատ» համալսարանը, 55 առողջապահական հիմնարկներ՝ 4 բժշկական կենտրոն, 1 ծննդատուն, 49 բուժամբուլատորիա, մշակույթի օջախներ, Արտաշատ քաղաքում Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Պարույր Սևակի և Սպարապետ Վ.Սարգսյանի տուն թանգարանները, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը: Մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան Հայոց գավառի մի մասը: Այստեղ են գտնվում հին Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքները:

Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ:

Մարզի գյուղատնտեսության տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր ծավալում կազմում է 16.6 %:

Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ծավալի 8.0 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու- կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, «Արարատ – ցեմենտ», «Ոսկու կորգման ֆաբրիկան», Արտաշատի, Արարատի պահածոների, «Մասիս տոբակո», «Ինտերնեշնլ Մասիս տոբակո» գործարանները:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

- 1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)
- 2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
- 3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզը ունի 4 քաղաքային /Արտաշատ, Արարատ, Վեդի և Մասիս/, 93 գյուղական համայնք:

Ազդակիր համայնք

ք. Արարատ

Մակերես՝ 27.69կմ²

Բնակչություն՝ 19573

Քաղաքային համայնք Արարատի տարածաշրջանում: Նախկինում ունեցել է Դեվալու, Դավալի, Դեվալու անվանումները: Նախկինում մտել է Երևանի նահանգի Երևանի գավառի մեջ: Արարատ է վերանվանվել 1947թ-ին: Տեղադրված է Երևան-Նախիջևան ճանապարհի վրա, Երևան քաղաքից մոտ 48 կմ հարավ-արևելք: Մարզկենտրոնից ունի 19 կմ հեռավորություն: Հիմնադրվել է 1920-1930-ական թթ. որպես կառուցվող ցեմենտի գործարանին կից ավան: 1938թ-ին Արարատը արագ աճի շնորհիվ դասվում է քաղաքատիպ ավանների շարքը, իսկ 1962թ-ից հանդիսանում է քաղաքային բնակավայր:

Տեղադրված է Միջինարաքսյան գոգավորությունում, ծովի մակարդակից 818 մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 աստիճան: Նվազագույն ջերմաստիճանը դիտվել է -30 աստիճան: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 200-250մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտների: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում, առանց որի անհնար է երկրագործությունը: Ունի օգտակար հանածոներ, դրանցից առավել նշանավոր են մոտակա Սալակիթ լեռան կրաքարը: Շրջակայքում կան կվարցի և օնիքսային սև մարմարի պաշարներ, որի մշակումից ստացվում է դեկորատիվ սալիկներ: Քաղաքի մոտ է գտնվում հիդրոկարբոնատակալցիումային հանքային բուժիչ ջուրը:

Հիմնադրման պահին 1926թ-ին բնակավայրն ունեցել է 45 բնակիչ, 1939թ-ին ունեցել է 2329, 1959թ-ին՝ 5412, 1976թ-ին՝ ավելի քան 15000 բնակիչ, որոնք տեղափոխվել են հարակից գյուղական բնակավայրերից: Ըստ 2005թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքի բնակչությունը կազմում է 19533 մարդ, որից 47% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 53%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 28%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 60%, հետաշխատունակները՝ 12%: Ունի դպրոցներ, գրադարաններ, մանկապարտեզներ, երաժշտական դպրոց, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց:

Տնտեսության տեսակետից քաղաքի մասնագիտացման ճյուղը ծանր արդյունաբերությունն է: Այստեղ գտնվում է հանրապետության երկու ցեմենտի

գործարաններից մեկը, որը ստեղծվել է տեղի կրաքարի հարուստ հանքավայրի հիման վրա: Արտաքին քաղաքականության բարենպաստ պայմանների դեպքում Հայաստանը կարող է դառնալ Հարավային Կովկասին և Մերձավոր Արևելքին ցեմենտ մատակարարող միջազգային կենտրոն: Ցեմենտի գործարանին կից կառուցվել է ոսկու կորզման ֆաբրիկան, ընդ որում միակը Հայաստանում: Այստեղ բերվում և վերամշակվում է Սոթքի և Մեղրաձորի ոսկու հանքաքարը: Քաղաքում կան նաև գինու-կոնյակի և պահածոների արդյունաբերության ձեռնարկություններ, որտեղ արտադրվում է գինի, կոնյակի սպիրտ, մրգերի, բանջարեղենի պահածոներ:

Ունի զարգացած գյուղատնտեսություն: Այստեղ գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն խաղողի, պտղատու այգիները, վարելահողերը: Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև կաթնամսատու ուղղության անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, մարզական համալիրի վերանորոգումը, փողոցների լուսավորվածությունը, աշխատատեղերի ստեղծումը: Արարատ քաղաքում ցեմենտի և ոսկու գործարաններով պայմանավորված աղտոտված է մթնոլորտային ավազանը:

4. ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

«Ավշարի գինու գործարան» ՍՊԸ-ն նախատեսում է գոյություն ունեցող Ավշարի գինու գործարանը վերազինել ավելացնելով 1 շալցման հոսքագիծ:

Իտալական արտադրության RT/24 մոդելի AVE վակուումային շալցման մոնոբլոկով նոր հոսքագիծը նախատեսվում է տեղակայել թիվ 2 շալցման արտադրամասում:

Հոսքագծի ժամային արտադրողականությունը կազմում է 6000 շիշ:

Նախատեսված է 0,2լ-ից-մինչև 1,0լ տարողության ապակյա շշերով ոգելից խմիչքների արտադրության համար: Որևէ շինարարական աշխատանքներ նախատեսված չեն:

«Ավշարի գինու գործարան» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կազմավորվել է 1995թ-ին, նախկինում գործող Ավշարի արտադրական կոմբինատի

սեփականաշնորհման արդյունքում: Գործարանը գտնվում է Արարատի մարզի Ավշար համայնքում, զբաղեցնում է 2,55 հա արտադրական մակերես: Գործարանում աշխատում է 220 մարդ, որից 38 ինժեներատեխնիկական աշխատողներ, 182 բանվորներ և սպասարկող անձնակազմ: Գործարանը զբաղվում է ոգելից խմիչքների՝ մասնավորապես կոնյակի, օղու և գինու արտադրությամբ: Նշված բոլոր արտադրատեսականին տարայավորվում է 0,2լ-ից մինչև 1,0 տարողության ապակյա տարաներով: Արտադրվող ոգելից խմիչքների բոլոր տեխնոլոգիական գործընթացները, սկսած օղու, գինու և կոնյակի համար հումք ծառայող ցորենի և խաղողի մթերումներից մինչև դրանք պատրաստի արտադրանքի վերածվելը, իրականացվում է գործարանում առկա սարքավորումների և ապարատների միջոցով: Գործարանը ամբողջովին գազաֆիկացված է, ունի երկկողմանի էլեկտրական սնուցում, ապահովված է խմելու ջրագծով, ինչպես նաև օգտագործվում է կենցաղային, արտադրական նպատակներով 2 խորքային ջրեր, որոնց համար կան համապատասխան ջրօգտագործման թույլտվություններ:

Արտադրության ընթացքում առաջացած կեղտաջրերի հեռացումը կատարվում է կենտրոնացված, փակ կոյուղու միջոցով: Արտադրական վտանգավոր թափոնները (խաղողի կնճեղ, ցորենի ջրխառնուրդ) ունեն թափոնի անձնագրեր, որոնց համար ներկայացվում է համապատասխան հաշվետվություններ: Տեխնոլոգիական գործընթացների հետևանքով օդային ավազանի և ջրահեռացման համար սահմանված և հաստատված են համապատասխան նորմատիվներ, որոնցով հաշվարկվում և վճարվում է բնապահպանական հարկերը: Գործարանի բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները ունեն անձնագրեր և ամեն տարի այդ օբյեկտները անցնում են տեխնիկական անվտանգության փորձաքննություն:

Գործարանը բաղկացած է՝

- Հումքի ընդունման արտադրամաս

Արտադրամասում իրականացվում է խաղողի ընդունման և վերամշակման գործընթացը: Արտադրամասն ունի 2 հոսքագիծ, որոնց ամեն մեկի հզորությունը կազմում է 25տ/ժամ:

Խաղողը ընդունվում է, կշռելուց հետո, բունկեր որի շնեկը այն տեղափոխում է ջարդիչ-չանչանջատիչ սարքավորում: Ջարդված խաղողը շնեկային պոմպով տրվում է հոսիչ

սարքավորում, որը առանձնացնում է ինքնահոս խաղողահյութը: Մնացած մասը տրվում է մամլիչին, որը առանձնացնում է խաղողահյութի ճնշումային ֆրակցիան: Ինքնահոս և ճնշումային ֆրակցիաները փոխադրվում են պահամաններ առանձին առանձին, որտեղ էլ տեղի է ունենում ինքնախմորում: Խմորումն ավարտելուց հետո իրականացվում է գինենյութի փոխլցում և այն պատրաստ է վերամշակման: Առաջացած խաղողի թափոնները (ընդունված խաղողի մոտ 20% չափով) համաձայն պայմանագրերի անհատույց տրվում է մատակարարներին տնտեսության մեջ օգտագործելու համար: Վերամշակվող խաղողի քանակը, կախված անհրաժեշտությունից, կարող է հասնել մինչև 6000տ:

- Թորման արտադրամաս

Պատրաստի արտադրանքը չափաբաժնավորումից հետո ենթարկվում է թորման Շարանտական տիպի թորման սարքավորումներով, երկու էտապով: Արտադրամասի օրական հզորությունը կազմում է 80տ գինենյութ:

Առաջացած գինենյութի թորվածքը հավաքվում և հանձնվում է հնեցման արտադրամասին:

-Հնեցման արտադրամաս

Հնեցման արտադրամասում իրականացվում է գինենյութի թորվածքի հնեցումը կաղնու հետ կոնտակտի պայմաններում 3-ից 30տարի և ավելի: Հնոցումը իրականացվում է կաղնու տակառներում (200-500լ), կաղնու բուտերում (7-12տն) և արժմապատ մետաղյա պահամաններում (15-25տն), որոնք տեղակայված են գործարանի 7 մառաններում: Նրանց ընդհանուր տարողությունը կաազմում է 500000դալ:

-Կուպաժի արտադրամաս

Այստեղ իրականացվում է կոնյակի պատրաստումը, որի համար ընդունվում է տարբեր տեսակի գինենյութի թորվածքներ (կախված պատրաստվող կոնյակի տարիքից), խմելու ջուր, շաքարի օշարակ (պատրաստված գործարանում) և կարամելային կոլեր (գնված ՌԴ): 4 բաղադրամասերը ավելացվում են այնպես, որ կոնյակը համապատասխանի նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Ստացված կոնյակը հանգստի շրջանը անցնելուց հետո, սառեցվում է մինչև -12°C և պահվում է 5-7օր: Այնուհետև ֆիլտրվում է ֆիլտրման թղթերով և վերականգնման ժամանակը անցնելուց հետո կարող է տրվել

շալցման: Արտադրամասը կարող է իրականացնել օրական 2 կուպաժ 20տ միջին ծավալով:

- Շալցման արտադրամաս

Շալցումը իրականացվում է 2 արտադրամասերում իտալական ֆիրմայի հոսքագծերի միջոցով, որոնց արտադրողականությունը կազմում է 3000շիշ/ժամ:

Կոնյակը ընդունվում է արծնապատ մետաղյա պահամանի մեջ, անցնում է մեմբրանային ֆիլտրով ապա անցնելով համապատասխան սարքավորումներով շալցվում և խցանավորվում է ապա խցանը ծածկվում է ջերմակծկումային թաղանթով: Այնուհետև պիտակավորվում է վրան նշվում է արտադրման ամսաթիվը, անցնում է դրոշմանիշների հսկման սարքավորումով, փաթեթավորվում է արկղերում, իսկ այնուհետև պալետավորվում է:

Այնուհետև կոնյակը հանձնվում է պատրաստի արտադրանքի պահեստ, որտեղից էլ իրացվում է: Կոնյակի շալցման ժամանակ առաջացած թափոնները (ապակի, պլաստիկ, թուղթ) համապատասխան պայմանագրերի համաձայն հանձնվում է վերամշակման:

-Սպիրտի արտադրամաս

Սպիրտի արտադրամասը իրականացնում է ցորենի ընդունում և մշակում, խմորում և բազմաթորում: Օրական մշակվում է 17-18տ ցորեն և արդյունքում ստացվում է 600դալ բազմաթորված սպիրտ: Ցորենը ընդունումից և չափաբաժնավորումից հետո ստացվում է ապա խառնվում է ջրին և ենթարկվում է ջերմային մշակման աստիճանաբար տաքացնելով մինչև 100°C: Համապատասխան ջերմաստիճաններում ավելացվում է երկու ֆերմենտ՝ ամիլազա և գլյուկոամիլազա: Առաջացած խառնուրդը տեղափոխվում է չաների մեջ և երբ ջերմաստիճանը հասնում է 30°C ավելացվում է խմորասնկեր:

3-4 օր խմորվելուց հետո հեղուկը ենթարկվում է բազմաթորման, որի արդյունքում ստացվում է բազմաթորված էթիլ սպիրտ: Հեղուկի մնացած մասը (բարդա) հավաքվում է հատուկ պահամաններում և որպես անասնակեր տրվում է համազյուղացիներին և աշխատակիցներին որպես անասնակեր: Ստացված սպիրտը պահեստավորվում է և տրվում է օդու կուպաժի արտադրամաս:

- Օդու կուպաժի արտադրամաս

Բազմաթորված սպիրտը ընդունվում և չափաբաժնավորվում է և կուպաժավորվում է խմելու ջրի հետ, որպեսզի ստացվի սպիրտի ջրային լուծույթ 40% թնդությամբ: Լուծույթը հանգստանալուց հետո անցկացվում է ակտիվացրած ածուխի ֆիլտրով, ստացված օդին հանգստանալուց հետո ենթակա է շշալցման:

- Օդու շշալցման արտադրամաս

Այստեղ իրականացվում է օդու շշալցումը, իտալական հոսքագծի միջոցով, որոնց արտադրողականությունը 3000շիշ/ժամ:

Օդին կուպաժի արտադրամասից ընդունվում է ապա շշալցվում է ու խցանավորվում: Այնուհետև պիտակավորվում է, եթե շշերը ձևավորված չեն և դրվում է ակցիզային դրոշմանիշ:

Շշալցման ամսաթիվը նշելուց հետո փաթեթավորվում է և հանձնվում է պատրաստի արտադրանքի պահեստ իրացման համար: Շշալցման ժամանակ առաջացած թափոնները (ապակի, պլաստիկ, թուղթ) հանձնվում է վերամշակման ըստ համապատասխան պայմանագրերի:

4.2 Գործարանի ջրամատակարարման և ջրահեռացման բնութագիրը

4.2.1. Ջրամատակարարման համակարգեր

Ջրօգտագործման թույլտվությունը ձեռնարկությունը ստացել է 27. 09. 2022թ. N 0184-22:

Թարմ խորքային ջուրը օգտագործվելու է միայն շշալցման գործընթացում: Առկա է երկու գործող խորքային հոր, որոնցից մեկը պահուստային, առավելագույնը 127,4հազ.լիմ/տարի, 425,0լիմ/օր, 14,7լ/վրկ չափաքանակներով:

- Ջրօգտագործման փաստացի քանակը՝ 127444,0լիմ/տարի

- միջին օրական՝ 425մ³,

- միջին ժամային՝ 53,0մ³,

- Միջին վայրկենական՝ 0.0147լիմ/վրկ=14,7լ/վրկ:

4.2.2. Ջրահեռացման ցանցեր և կառույցներ

Կեղտաջրերն առաջանում են սարքավորումների լվացումից, և տնտեսա-կենցաղային ջրօգտագործումից: Արտադրական նպատակով ջուրն օգտագործվելու է ցորենի խմորման և շշերի լվացման համար: Ջրահեռացման չափաքանակներն են՝

- Ջրահեռացման փաստացի քանակը՝ 100432,0 խմ/տարի,
- միջին օրական՝ – 335 մ³,
- միջին ժամային – 42,0 մ³,
- Միջին վայրկենական – 0.012 խմ/վրկ = 12,0 լ/վրկ:

4.2.3. Ջրապահանջը հրդեհաշիջման կարիքների համար

Հրդեհաշիջման համար ջրի ծախսը ընդունված է համաձայն ՀՀՇՆ 40.01.01-2014 և СНиП 2.04.02-84 [18,19].

- ներքին հրդեհի մարման համար ջրի ծախսը ընդունված է 5 լ/վրկ (2.5 լ/վրկ 2 շիթով)՝ համաձայն ՀՀՇՆ 40.01.01-2014 № 2 աղյուսակի [18]:
- արտաքին հրդեհի մարման ջրի ծախսը ընդունված է 10 լ/վրկ, СНиП 2.04.02-84 № 7 աղյուսակի համաձայն:

Գործարանի էլ. սնուցումը կատարվում է երկու ուղղությունից՝

1. հիմնական «Այգավան 35/10» ենթակայանի №6 բջջիչ օդային գծով մինչև գործարանին հարակից փողոց: Հենասյան վրա տեղադրված օդային անջատիչից հետո (АСБ-10-3x70) բարձրավոլտ մալուխով մուտք է գործում ենթակայան՝ բարձրավոլտ վահանակ (КСО-366) ուժային անջատիչ, այնուհետև անցնում է երկրորդ վահանակ, անջատիչ ապահովիչ և (АСБ-10-3x70) մալուխով միանում 10/0,4-630 կվա տրանսֆորմատոր, հաշվիչ սարք:

0,4Վ լարումը 2 հատ 3x150+1x50 մալուխով միանում է Ավտոմատ փոխարկիչ (АВР 0,4 630А):

2. պահեստային էլ. սնուցումը կատարվում է «Վանաշեն 110/10» ենթակայանից «Այգավան 10» ուղղությունով օդային գծով մինչև գործարանին հարակից փողոց, հենասյան վրայի օդային անջատիչից (АСБ-10-3x70) բարձրավոլտ մալուխով մուտք է գործում ենթակայան՝ բարձրավոլտ ենթակայան (КСО-366) վահանակի ուժային անջատիչ:

Անցնելով երկրորդ վահանակ, բարձրավոլտ անջատիչ-ապահովիչ (ACB-10-3x70) մալուխով միանում է 10/0,4-630կվա տրանսֆորմատորին:

0,4 լարումը 2հատ 3x150+1x50 մալուխով միանում է Ավտոմատ փոխարկիչ (ABP 0,4 630A):

Ենթակայանից բախշիչ վահանակներից 3x150+1x50 մալուխներով բաշխվում է տարբեր ուղղություններ, արտադրամասերի բաշխիչ վահանակներ:

Գործարանում արտադրական նպատակներով օգտագործվող գոլորշու, տաք ջրի և ջեռուցման նպատակների համար ունի կաթսայատուն, որտեղ որպես վառելիք օգտագործվում է բնական գազ: Գազամատակարարումը համաձայն ԳԳՄ 08.02.2006թ. թիվ 4 տեխնիկական պայմանի միացվում է գործարանի ցանկապատին հարող հատվածով անցնող Φ 108x4 մմ վերգետնյա միջին ճնշման գազատարին:

Կաթսայատանը տեղադրված են մեկ հատ DE-10/14, և 2հատ DE-6,5/14 տիպի կաթսաներ՝ որոնցից երկուսը պահեստային:

Գազի ծախսի հաշվառման համար տեղադրված է RPI-3 տիպի G650 դուբինային և G40 գազահաշվիչներ իրենց հանգույցով:

5. ԱՌԱՋԱՅՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

✓ Էթիլ սպիրտի և կենրային խմորիչների արտադրության թափոններ

Թափոնի կազմը՝ Չոր նյութերի քանակությունը՝ 6-8%, որը պարունակում է սպիտակուցներ 37-43%, թաղանթանյութեր 12-14%, օրգանական թթուներ 1,2-1,5%, ճարպանման նյութեր 3-8%, մոխրանյութեր 3-7%, վիտամիններ և ջրային մասսա 18,5-37,8%: Թափոնների քանակը կկազմի 6000 տ/տարակեր: Թափոնը հանդիսանում է որպես անասնակեր:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած թափոնը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 1114140003004 [20]:

✓ Գինեգործության նստվածքներ

Թափոնի կազմը՝ սպիրտ՝ 5%, օրգանական նյութեր /մահացած խմորասնկեր/ 25%, գինեթթու 5%, գինեքար/գինեթթվակիր 35%, ամինաթթուներ 12%, գլյուտամինաթթու

10%, վիտամիններ, սպիտակուցային և ազոտային միացություններ 8%: Թափոնների քանակը կկազմի 3000 տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած թափոնը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 1114130003004 [20]:

Ձեռնարկության գործունեության արդյունքում առաջացող թափոնների ցանկը և քանակները բերված են աղյուսակ 5.1-ում:

Թափոնների ցանկը և տարեկան քանակները

Աղյուսակ 5.1

N	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը (Թափոնների ցանկի) [20]	Չափման միավորը	Քանակը կամ ծավալը
1	Էթիլ սպիրտի և կենրային խմորիչների արտադրության թափոններ	IV	1114140003004	տ/տարի	6000
2	Գինեգործության նստվածքներ	IV	1114130003004	տ/տարի	3000
	Ընդամենը			տ/տարի	9000

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Նախատեսված արդի սարքավորման տեղադրման շնորհիվ խորքային ջրի խնայողություն՝
 - կբացառվի շաղցման ընթացքում ջրի վերաթափումը և կորուստը,
 - շէրի խցափչման ինովացիոն մեքենան կահավորված է սանիտար մշակման ուլտրամանուշակագույն լամպերով և բարձր ճնշման օդի լրացուցիչ գտման համակարգով, ինչը թույլ կտա վերացնել նոր շէրի ողողման անհրաժեշտությունը և կբերի խորքային ջրի ծախսի կրճատմանը՝,
- Գործարանի արդիրապարակում առկա է բարեկարգ և կանաչ գոտի;
- Հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղայի աղբով և այլ տեսակի թափոններով:

Հաշվի առելով այն հանգամանքը, որ գործարանը կառուցված և գոյություն ունեցող է, ուստի մեկ հոսքագծի տեղադրումը որևէ ազդեցություն ունենալ չի կարող շրջակա միջավայրի վրա:

7. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

✓ Շենքերը և շինությունները կառուցված է տվյալ շրջանի կացության չափանիշների կլիմայական և երկրաբանական ռիսկին համապատասխան՝ հաշվի է առնված սեյսմիկ ակտիվությունը, քամու արագությունը և այլ դինամիկական բեռնվածությունները,

✓ Գործարանի շինությունները, սարքավորումները տեղաբաշխված են այնպես, որ տարերային աղետների դեպքում հասցված պոտենցիալ վնասի չափը լինի նվազագույնը,

✓ Նոր ներդրվող սարքավորումը օժտված են ավտոմատ կարգավորմամբ, ինչը թույլ կտա նվազեցնել վթարային վերաթափումների ռիսկը,

✓ Վթարային վերաթափումների հավաքման համար գլխավոր արտադրամասը կահավորված է դրենաժային համակարգով,

✓ Նախատեսված է արտաքին և ներքին հրդեհամարման համակարգ: Գործարանի արտադրական հրապարակի ջրամատակարարման ցանցի վրա, ջրհորներում տեղադրված են հակահրդեհային հիդրանտներ,

✓ Բոլոր շինությունները պետք է ունեն հողանցում և շանթապաշտպանություն, ապահովված են պահուստային ելքերով,

✓ Ձեռնարկությունը արտակարգ բավիճակների ծառայության հետ համատեղ մշակել է վթարների վերացման պլան և ունի դրանց իրականացման սցենար: Ստեղծված է շարժունակ, անհրաժեշտ սարքավորումներով ապահովված և վարժված հակավթարային խումբ, որը կարող է վթարների դեպքում ցույց տալ առաջին օգնությունը: Խումբը ունի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժունակ կապ), որով կարող է կապվել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ: Հակավթարային խումբը պետք է ժամանակ առ ժամանակ մշակի վթարային իրավիճակների տարբեր սցենարներ և անցկացնի վարժանքներ:

✓ Գործարանում ժամանակ առ ժամանակ անցկացվում է վթարային ռիսկերի գնահատում,

✓ Աշխատողները պետք է առաջնորդվեն տեխնոլոգիական պրոցեսի անվտանգ վարման հրահանգներով, իմանան, թե ինչպես ապահովել առաջին (մինչքժշկական) օգնությունը: Աշխատանքի ընդունվելու համար դիմելիս և առնվազն ամեն 6 ամիսը մեկ աշխատողները պետք է հրահանգավորվեն աշխատանքի անվտանգ կատարման կանոնների վերաբերյալ, և առնվազն տարին մեկ անգամ պետք է ստուգվի նրանց հրահանգների իմացությունը ըստ մասնագիտությունների: Ստուգման արդյունքները պետք է արձանագրվեն, գրանցվեն հատուկ հրահանգավորման մատյանում և աշխատողի անձնական քարտում:

8. ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՎՐԱ

Բաժինը մշակված է՝

- «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ գործարանի նախագծի հիման վրա,
- տեղանքի գլխավոր հատակագծի հիման վրա,
- կառուցման շրջանի ֆիզիկա-աշխարհագրական և կլիմայական բնութագրերի հիման վրա:

8.1. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումները

Համաձայն PՃ 52.04.52-85, անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում (ՍՕՊ) նախատեսվում են միջոցառումներ՝ ուղղված աղտոտող նյութերի արտանետման նվազեցմանը մթնոլորտի մակերևութային շերտում: Կազմակերպությունում արտանետումների կարգավորման հարցը ղեկավարության հրամանով դրվում է պատասխանատու անձի վրա, ով պետք է մշտական կապ պահպանի Հիդրոմետժառայության հետ: Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում պետք է.

- թույլ չտալ կաթսայի աշխատանքը գերբեռնվածության ռեժիմով,

- ուժեղացնել հսկողությունը բնական գազի այրման գործընթացի նկատմամբ:

9. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ

9.1. Խորքային ջրի օգտագործումը

Խորքային ջուրը հիմնականում օգտագործվելու է անմիջապես շշակցման համար: Ջրի լրացուցիչ ծախսը նախատեսվում է շշակցման սարքավորումների լվացման (լվացող լուծույթների պատրաստում, լվացած մակերեսների ողողում ջրով), բարձր ճնշման կոմպրեսորի հովացման համակարգի և կաթսայի լրասնուցման նպատակով:

Հողային ռեսուրսների վրա ազդեցության գնահատականը

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը բացակայում է, քանի որ ոչ մի հողային աշխատանքներ չեն իրականացվելու, այլ տեղադրվելու է ընդամենը մեկ հոսքագիծ:

10. ԲՆԱՊԱՀԱՅԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

Բնապահպանական կառավարման պլանը և մոնիթորինգի ծրագիրը թույլ կտա գնահատել և հսկել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ժամանակին ահազանգել խախտումների մասին, որպեսզի դրանք ժամանակին կանխարգելվեն կամ վերացվեն:

Բնապահպանական կառավարման պլանը և մոնիթորինգի ծրագիրը բերված է ստորև աղյուսակում:

Բնապահպանական կառավարման պլան և մոնիթորինգի ծրագիր

Վայրը/ գործողությունը/փուլը	Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի փուլը	Գործիքները և մեթոդները	Բնապահպանական միջոցառումների իրականացման ինդիկատորները	Պատասխանատու մարմինները	Հաճախականությունը և ժամանակը
Թափոնների կառավարում և հեռացում	Կոշտ թափոններ	Նախագծով սահմանված կուտակման վայրեր	Տեսողական զննում	Թափոնները կուտակված են համապատասխան տեղերում	Բնապահպանական բաժին	Պարբերաբար ըստ հաստատված գրաֆիկի
Գործարանի տարածք	Մթնոլորտային օդ	Շահագործման ամբողջ ընթացքում	Ասպիրացիոն սարքով և գործող մեթոդակարգով	Նորմաների գերազանցում	Ձեռնարկության բնապահպանական բաժին	Եռամսյակը մեկ
Գործարանին հարող տարածք	Բուսական ծածկ	Տարածքից դուրս բուսածածկի խախտում	Տեսողական զննում	Անհիմն խախտված տարածքի վերականգնում	Ձեռնարկության բնապահպանական բաժին	Պարբերաբար
Գործարանին հարող տարածք	Կենսաբազմազանություն	Բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություններ	Դաշտային երթուղային մեթոդով	Բուսականության և կենդանական աշխարհի վիճակը	Ձեռնարկության բնապահպանական բաժին	Երկու տարին մեկ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սեյսմակայուն Շինարարություն: Նախագծման նորմեր - ՀՀՇՆ II-6.02-2006
2. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:- «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007թ.
3. Геология Армянской ССР. Том VIII. Гидрогеология. - Ереван: изд-во АН Арм. ССР - 1974г.- 392с.
4. “Строительная климатология” СНРА II-7.01.96
5. «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կլիմայական տվյալներ
6. “Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն”, Աշտարակ, 2017
7. Տարածքի հողերի, բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրության արդյունքները, 2019թ.
8. Հայաստանի բույսերի Կարմիր գիրք – 2010
9. Малышев Л.И. Современные подходы к количественному анализу и сравнению флор. В кн.: Теоретические и методические проблемы сравнительной флористики. Ленинград, Наука, 1987, с. 142-148
10. Тахтаджян А.Л. Флористические области земли // “Наука”, Ленинград, 1978. 248 с.
11. Ծատուրյան Թ.Գ., Գևորգյան Մ.Լ. Հայաստանի ուտելի վայրի բույսերը // Երևան, “Լուսակն”, 2007. 300 էջ
12. ararat.mtad.am
13. ՀՀՇՆ 40.01.01-2014 “Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում”, հաստատված է 17.03.2014թ. Բնապահպանության նախարարի թիվ 80-Ն հրամանի համաձայն
14. СНиП 2.04.02.84. Водоснабжение. Наружные сети и сооружения. - М., 1985г.

15. Բնապահպանության նախարարի N 430-Ն 25.12.2006թ. հրամանին կից վտանգավորության դասի ցանկ
16. ՀՀ Բնապահպանության նախարարություն: «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» Հայէկոմոնիտորինգ: ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ:
17. ՀՀ բնապահպանության նախարարություն: Հրաման №268-Ա առ 23 հոկտեմբերի 2012թ.: Մինչև 5.8 ՄՎտ դրվածքային հզորությամբ պինդ, հեղուկ և գազային վառելիքով աշխատող կաթսայատների վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդական ցուցումները հաստատելու մասին:
18. Водное хозяйство. Справочник/ ред.И.И.Бородавченко.Т.5.-М.:ВО “Агропромиздат”, 1988, 399 с.
19. Свойства неорганических соединений. Справочник. – Л.: Химия, 1983, 390с.
20. Методика расчета предельно допустимых сбросов (ПДС) веществ в водные объекты со сточными водами. – Харьков, 1990г
21. Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին: ՀՀ Կառավարության N 75-Ն որոշում, 27.01.2011թ.
22. Տեղեկանք ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիտորինգի արդյունքների մասին.- ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն, <http://www.armmonitoring.am/2018թ.>
23. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը»՝ հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N91-Ն որոշմամբ:
24. ՀՀ Կառավարության N 1110-Ն որոշում «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ», 14.08.2003թ.
25. ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1274-Ն որոշում “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սզբունքները հաստատելու մասին: Հավելված 1

26. ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 3-ի N 237 որոշում «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակություն և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի սվյալները հաստատելու մասին,
27. ՀՀ կառավարության որոշում 25 հունվարի 2005 թվականի N 92-Ն, Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած գնահատման կարգը
28. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов. Новороссийск 1985г.
29. Нормативные показатели удельных выбросов вредных веществ в атмосферу Харьков 1991г.
30. Методика проведения инвентаризации выбросов загрязняющих веществ в атмосферу для автотранспортных предприятий (расчетным методом), 1998 г.
31. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы. Обнинск 1984г.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ